Տրավմատիկ ռետիկուլիտ և ռետիկուլոպերիկարդիտ (երկրորդ նախաստամոքսի, ցանցի և սրտապարկի բորբոքում)

Հիվանդության բնորոշումը. Այս հիվանդությունը առաջանում է ցանցի՝ երկրորդ նախաստամոքսի պատը և որովայնամիզը (որովայնի ներքին պատը պատող թաղանթ) սուր ծակող օտար մարմնով վնասվելու հետևանքով:

Պատճառները

- Առաջանում է անփույթ հավաքած կերերի մեջ ընկած սուր ծակող առարկաներից՝ մեխեր, մետաղալարեր, քորոցներ, ասեղներ և այլն:
- Արոտների աղտոտվածության հետևանքով (մասնավորապես, երբ արոտում վառում են անվադողեր):
- Հանքային նյութերի պակասից, երբ կենդանիները լիզում կամ ուտում են տարբեր պատահական առարկաներ:

Կլինիկական նշանները.

- վատանում է կենդանու ախորժակը, որոճը, նկատվում են անհանգստության նշաններ,
- կենդանին տնքում է, հատկապես պառկելիս, բարձրանալիս, որոճելիս, շարժվելիս և այլն,
- խուսափում է ակտիվ շարժումներից,
- մարմնի ջերմությունը բարձրանում է 39.5-40^{0}C,
- կաթնատվությունը խիստ իջնում է,
- կենդանին կանգնում է առջևի վերջավորությունները լայն բացած, երբեմն մսուրի մեջ դրած,
- առաջ է գալիս մկանային դող, փշաքաղվածություն,
- կենդանու կրծոսկրի թրաելունային հատվածին բռունցքով սեղմելիս առաջանում է ցավային ռեակցիա,
- կենդանին զառիվայր շարժվում է դժվարությամբ կամ ընդանրապես չի կարողանում իջնել,
- կրծի առջևի պտուկները ձգելուց կենդանին անհանգստանում է ցավային ռեակցիայից:

Կանխարգելումը. Տրավմատիկ ռետիկուլիտի և ռետիկուլոպերիկարդիտի դեմ պայքարի գործում ամենակարևորը համարվում են կանխարգելիչ միջոցառումները: Կենդանիներին ներքին (բերանով) տալ մագնիսական օղակներ՝ մագնիսական զոնդի օգնությամբ: Մագնիսը նախաստամոքսում մնում է կենդանու ողջ կյանքի ընթացքում ու վերջինիս սպանդից հետո կարելի է կիրառել մեկ այլ կենդանու համար: Պետք է կերերը հավաքել և պահել մաքուր՝ օտար առարկաներից զերծ: Թույլ չտալ արոտների աղտոտումը մետաղական առարկաներով:

Բուժումը. Բուժման համար դիմել անասնաբույժին: Շատ դեպքերում բուժումն անարդյունավետ է: Բուժման համար կատարում են վիրահատություն: Օգտագործում են իխտիոլ, հակաբիոտիկներ և այլն: